ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 28.02.2024թ.
Ժամը 10^{50}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյան (ԳԱՊ),
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Ջաղոյան:
Բացակայում է՝
ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Է. Գաբրիելյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
2	«Ռեդինետ» ՓԲԸ
3	«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ
4	«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ
5	«ՕՊՏՈՎԱՅՐ» ՍՊԸ
6	«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ
7	«Սոլար Ցենտր» ՍՊԸ
8	«Ֆրիներջի» ՍՊԸ
9	«ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
10	«Արպանիվ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգին «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն, «Սոլար Ցենտր» ՍՊԸ-ն և «Արպանիվ» ՍՊԸ-ն հայտի ապահովումները ներկայացրել են կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, գնահատող հանձնաժողովը 28.02.2024թ. որոշեց կասեցնել նիստը և վերոնշյալ փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով դիմել ՀՀ ֆինանսաբյուջետային վարչությանը: Հաջորդ նիստը կկայանա ՀՀ ֆինանսաբյուջետային վարչության կողմից համապատասխան տեղեկատվության տրամադրումից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Գ. Սարգսյան
Գնահատող	Խ. Երիցյան
Գնահատող	Ռ. Զադոյան
Գնումները համակարգող՝	Ս. Եսոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 05.03.2024թ.
Ժամը 15[30]

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զադոյան:
Բացակայում է՝
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Է. Գաբրիելյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. 28.02.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման կասեցված նիստի օրակարգը շարունակելու վերաբերյալ.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1 . 28.02.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման կասեցված նիստի օրակարգը շարունակելու վերաբերյալ.

(Ս.Եսոյան)

1.1 05.03.2024թ. շարունակելով հայտերի գնահատման և ամփոփման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի, «Սոլար Ցենտր» ՍՊԸ-ի և «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումները համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

1.2 «ՕՊՏՈՎԱՅՐ» ՍՊԸ-ի, «Սոլար Ցենտր» ՍՊԸ-ի և «Արպանիվ» ՍՊԸ-ի հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Ռեդինետ» ՓԲԸ-ի, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի, «ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ-ի, «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ի և «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերի, մասնավորապես՝

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով, բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը:

«Ռեդինետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը և գծագիրը:

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է Դավիթ Մարտիրոսյանի կողմից, այնինչ վերջինս, ըստ հայտով տրամադրված լիազորագրի, այս ընթացակագի շրջանակներում նման իրավասությամբ լիազորված չէ, ինչպես նաև հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը:

«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը և գծագիրը:

«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ի -ի կողմից ներկայացված հայտի հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով, բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը:

«ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հավելված 1-ում բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Քանի որ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը պետք է դիմում հայտարարությունը լրացնելիս նշի «Իրավաբանական անձանց պետական

գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը, ուստի անհրաժեշտ է շտկել անհամապատասխանությունը և ներկայացնել Ձեր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Հավելված 1.1-ում՝ 2-րդ չափաբաժնի մասով բացակայում է սույն ընթացակարգի հրավերով պահանջվող TUV սերտիֆիկատը և գծագիրը, ինչպես նաև արևային վահանակի համար հրավերով սահմանվել է «Լարումը մաքսիմալ հզորության ժամանակ առնվազն (Vmp) 33Վ», իսկ ընկերությունը ներկայացրել է պահանջվածից ավելի ցածր պարամետրեր՝ «Լարումը մաքսիմալ հզորության ժամանակ առնվազն (Vmp) 31.76Վ»:

Քանի որ առարկայի բնութագիրը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրի ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել և ներկայացնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 05.03.2024թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

2.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 12.03.2024թ. ժամը 11:20-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նախագահ (ԳԱՊ) Գ. Սարգսյան

Հ. Երիցյան

Ռ. Զադոյան

Քարտուղար՝ Ս. Եսոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 10
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.03.2024թ.
Ժամը 11[20]

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյանը բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Է. Գաբրիելյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Է. Գաբրիելյան,

ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, ավագ սպա Խ. Երիցյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զադոյան:

Բացակայում է՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. 05.03.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցներից պահանջված շտկումները քննարկելու վերաբերյալ.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. 05.03.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակիցներից պահանջված շտկումները քննարկելու վերաբերյալ.

(Ս.Եսոյան)

12.03.2024թ. շարունակելով հայտերի բացման և գնահատման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, «Ռեդինետ» ՓԲԸ-ն, «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն, «ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ-ն և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Իսկ «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել) պահանջվող շտկումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

2.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 10 մասնակիցներ.

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	ցանցային մալուխներ	մետր	250 000	41,250,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	32,250,000	6,450,000	38,700,000
					«Ռեդինետ» ՓԲԸ	33,200,000	6,640,000	39,840,000
					«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ	33,296,200	6,659,240	39,955,440
					«ՕՊՏՈՎԱՅՐ» ՍՊԸ	23,937,500	4,787,500	28,725,000
2	արևային վահանակներ	հատ	400	34,000,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	22,010,000	4,402,000	26,412,000
					«Ռեդինետ» ՓԲԸ	26,400,000	5,280,000	31,680,000
					«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ	17,391,000	3,478,200	20,869,200
					«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ	24,990,000	4,998,000	29,988,000
					«Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ	24,833,000	4,966,600	29,799,600
					«Սոլար Ցենտր» ՍՊԸ	20,685,000	4,137,000	24,822,000
					«Ֆրիներջի» ՍՊԸ	16,466,000	3,293,000	19,759,200
					«ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	75,000	0	75,000
3	կապարային մարտկոցներ	հատ	600	37,800,000	«ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ	29,000,000	5,800,000	34,800,000
					«Արպանիվ» ՍՊԸ	29,669,000	5,933,800	35,602,800

«ՋԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն ըստ ներկայացրած տեղեկատվության ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

2.2 Բոլոր Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ «Ֆրիներջի» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ գնային առաջարկի Արժեք, ԱԱՀ և Ընդհանուր գին սյունակներում նշված գումարները սխալ են հաշվարկված:

2.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

3.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 13.03.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՕՊՏՈՎԱՅՐ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի մասով՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ «ԷԿՈՎԻԼ» ՍՊԸ-ն:

3.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

4.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Է. Գաբրիելյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնահատող Ռ. Զադոյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան